ՄԵՆՔ ԵՒ ՄԵՐ ՀԱՐԵՒԱՆՆԵՐԸ

(ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ)

Գրեց՝ ԱՐՏ. ԱԲԵՂԵԱՆ

LXIII

ՎՐԱՍՏԱՆԻ հանդէպ մեր ունեցած պահանջները բաղդատաբար աւելի քիչ են, քան Ադրբէջանի հանդէպ։

Ինչպէս Ադրբէջանի, այնպէս նաեւ Վրաստանի հետ ունեցած մեր տարաձայնութեանց հիմքը հողային (տերրիտորիալ) բնոյթ է կրում։ Ինչպէս որ Նախիջեւանը եւ Ղարաբաղը Ադրբէջանին են կցուել, պոկուելով Հայաստանի մարմնից, այնպէս նաեւ պատմական Ջաւախքը (կամ այժմեան Ախալքալաքի գաւառը) եւ Լոռուայ անմիջական շարունակութիւնը կազմող Հարաւային Բորչալուն՝ Վրաստանին։

Պատմական անցեալում որքան որ Ջաւախքը վրացական հող է համարուել, նոյնքան եւ շատ աւելի չափով եղել է նա հայկական։ Դրա վրայ չծանրանանք։ Փաստն է յամենայն դէպս, որ ահա ուղիղ մէկ տարուց ի վեր Ջաւախքը իր ազգաբնակչութեան կազմով գերացանցօրէն հայաբնակ շրջան է։ Երբ 19-րդ դարու սկզբին ռուսները իրենց տիրապետութեան տակ առին բուն Վրաստանը, Իմերէթիան եւ վրացական ուրիշ հողեր, այդ միջոցին Ջաւախքը մինչեւ իսկ նրանցից ոեւէ մէկի մաս չէր կազմում, այլ մտնում էր Տաճկաստանի սահմանների մէջ։ Այն ժամանակները նրա բնակչութիւնը բաղկացած էր գլխաւորապէս մահմեդականներից եւ մասամբ էլ հայերից, իսկ վրացական տարր գոյութիւն չունէր դրեթէ։ Իսկ երբ, որպէս հետեւանք Ադրիանուպոլսի դաշնագրի, Ախալցխայի հետ միաժամանակ Ջաւախքը եւս ռուսական տիրապետութեան տակ անցաւ, վերջինիս մահմեդական ազգաբնակութիւնը գրեթէ ամբողջապէս լքեց այն եւ տեղափոխուեցաւ Տաճկաստան, ինչ որ այն ժամանակները սովորական երեւոյթ էր։ Դրա փոխարէն, ընդհակառակը, բազմահազար հայ գաղթականութիւն եկաւ Տաճկահայաստանից (Կարնոյ շրջան) ու բնակութիւն հաստատեց թափուր մնացած Ջաւախքում։ Ցայտնի է, որ ազգերի նման տեղափոխութիւն էր տեղի ունեցել նաեւ Պարսկաստանից Ռուսիային անցած հողամասերում — Այրարատեան դաշտ, եւայլն։

Ռուսական տիրապետութիւնը Անդրկովկասում հաստատուելուց յետոյ, շատ տարիներ անց միայն, Ջաւախքում — ինչպէս նաեւ այլ վայրերում — բնակութիւն հաստատեցին ռուս ազանդաւոր գաղթականներ եւս (դուխոբորներ), որոնց ցարական կառավարութիւնը երբեակ նպատակով էր հաստատել տալիս Հայաստանի ցրտաշունչ վայրերում. մէկ՝ որպէս պատիժ իրենց հերձուածութեան համար ռուսական եկեղեցուց, երկրորդ՝ որպէս առաջապահներ ռուս զէնքի՝ դէպի տաճկահայ հողերը, եւ երրորդ՝ Անդրկովկասը աստիճանաբար ռուսներով բնակեցնելու (կոլոնիզացիա), ռուսացնելու նպատակով։ Բաւական անց, 90-ական թուականներին, նոյն այդ դուխոբոր ազանդաւորները, որպէս հակառակորդ պատերազմի եւ պարտադիր զինուորագրութիւնը ժխտող եւ դասալքող տարր, շարաչար հալածանքների ենթարկուեցան եւ հարկադրուած եղան զանգուածօրէն, շարժական գոյքերը հետները առած, Ամերիկա (Կանադա) գաղթել։ Ցայտնի է նաեւ, որ այդ ժամանակ Տոլստոյը, որի հետեւորդներն էին համարւում դուխոբորները, բողոքի ձայն բարձրացրեց ցարական հալածանքների դէմ, բայց՝ ապարդիւն։

Երբ 1918 թուականին, որպէս հետեւանք բոլշեւիկեան յեղաշրջման եւ կովկասեան ռազմաճակատի քայքայման, տաճիկները ներս խուժեցին Անդրկովկաս, նրանք իրենց տիրապետութեան տակ առին նաեւ Ջաւախքը. նոյն այդ թուականի Մայիս ամսին անկախ հռչակուած Հայաստանը համարում էր Ջաւախքը իր հողամասը, Վրաստանն էլ՝ իրենը։

Փաստն այն է, որ տաճիկների կողմից բռնագրաւուած այդ գաւառի հայութիւնը, կարուած լինելով Հայաստանից, հարկադրը-